

Գորգի վրայ ճաշելու սովորութիւնը ռամիկ հայուն մօտ մինչեւ ժժ դար դեռ կը շարունակուի: 1829ին Dr. Fred. Parrot Հայաստան իր այցելութեան առթիւ Թաշպուրունի կոչուած հայ գիւղին մէջ կը հիւրասիրուի գիւղին հայ աղայէն, որ իր հիւրին ճաշին համար գորգ սփռել եւ վրան սեղան յարդարել կու տայ⁽¹⁰³⁾: Դարձեալ Baron Von Haxthausen Քանաքեռ՝ Արովեանենց տունը իր այցելութեան առնէն 1844ին, կը վկայէ որ «փսիաթ մը փռուեցաւ, որուն վրայ ձգուեցաւ գորգ մը, իսկ ասոր վրայ ալ սեղանի սփռոցը»⁽¹⁰⁴⁾:

Այս սովորութիւնը առնէն հեռու, ճամբորդութեան առնէն ալ կը կիրարկուէր: Tavernier կը վկայէ որ կարաւանով ճամբորդողները «գետինը սփռուած գորգերու վրայ» կը ճաշէին:

Սովորութիւնը միայն հայոց տրուած չէր, այլ նաեւ մեր դրացի ժողովուրդներուն: Պապական քննիչ-նուիրակ Dandini ժՁ դարու վերջը մարտնիթներու այցելութեան առթիւ կը գրէ որ «անոնք գետինը սփռուած գորգերու վրայ կ'ուտէին ու կը խմէին, եւ սեղանի ծածկոցի տեղ կաշիէ՛ կըր կտոր մը կը սփռէին շուրջը հացով ծածկուած՝ եթէ նոյնիսկ երկու երեք հոգի ըլլային ճաշողները»⁽¹⁰⁵⁾: Ասիկա որոշ կերպով կը հաստատէ Սպանիացի Clavijոի վկայութիւնը

Կըր կաշիէ սեղանի այս սփռոցին է որ կ'ակնարկէ Փաւստոս իր «ակումբ»ով, երբ կը վկայէ որ հայրապետն Ներսէս ճաշի չէր նստեր առանց խեղճերու եւ աղքատներու, որոնք «ի նորա ակումբի դարմանէին բազմեալք»⁽¹⁰⁶⁾: Հ. Հացունի կ'աւելցնէ որ «Ակումբ Ս. Գրոց մէջ մորթի հետ ալ դործածուած է թարգմանչէն, գալումբն մաշկեայ՝ փոխան բնագրին միակ մաշկ բառին (Յղթ. ԺԲ. 15). եւ կարծել կու տայ՝ թէ Փաւստոսի օրինակին մէջ ալ հոմանիչ է տապաստակին»⁽¹⁰⁷⁾: Սակայն ըստ իրեն տապաստակները՝ ինչպէս տեսանք՝ «աղին սփռոցներ» էին «տապաստ արկանելիք» եւ «բաղմականին վրայ ձգուած»⁽¹⁰⁸⁾: Ես հոս աւելի կը հաստատուիմ իմ կարծիքիս մէջ որ տապաստակ ուրիշ բան չէ՝ եթէ ոչ «գալումբն մաշկեայ» կամ կաշիէ կըր ծածկոցը, որ սեղանի գորգին վրայ կը սփռուէր, որուն մասին կը յիշեն օտարներն իսկ, օրինակ ժԵ դարուն Clavijո եւ ժՁ դարուն Dandini:

Գորգի վրայ կը ճաշէին նաեւ Պարսիկները, օրինակ ժԵ դարուն, ըստ Thomas Herbertի:

Գորգը կը դործածուէր նաեւ իբր անկողինի տակի սփռոց: Նախ գորգը կը փռուէր եւ յետոյ անոր վրան բուրգէ անկողինը, սաւանը եւ հուսկ վերմակը: Tavernier կը վկայէ որ Պարսից տուններուն մէջ, որոնք գորգերով զարդարուած էին, պատկելու առնէն տախտակամար

(103) Journey to Ararat. — London, 1845, p. 209.

(104) Transcaucasia. — London, 1854, p. 244.

(105) A Collection of Voyages and Travels. — Thomas Osborne, London, 1745. Vol. I, p. 846.

(106) 1914ի Վենետիկի հրատարակութիւն, էջ 106:

(107) Ճաշեր եւ ինճոյք. — էջ 56:

(108) Անդ, նոյն: